ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/227

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական պարագաների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14623-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 23.09.2020թ. թիվ 07-310 գրության հիման վրա, 28.09.2020թ.-ին «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.09.2020թ.-ին:

28.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/227 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

08.10.2020թ.-ին և 28.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.10.2020թ.-ին:

2. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 23.09.2020թ. թիվ 07-310 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

««Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնում է Ձեզ. որ 19.02.2020թ. N ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր է կնքվել «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի հետ: 11.03.2020թ պայմանագրին կից կնքվել N16 համաձայնագիրը: Համաձայն նշված պայմանագրի 1.1 կետի Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է, ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրերի 2.1.7-րդ կետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պատվիրատուի կողմից էլ փոստի և հեռախոսային կապի միջոցով բազմիցս ապրանքի մատակարարման պատվեր է արվել 10.09.2020թ /պատվերը կից ֆայլով/ . որը սակայն մնացել է անպատասխան

Հետևաբար, Մատակարար ընկերության կողմից խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

«Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից ծանուցվել է «Միդա թրեյդ» ՍՊԸ-ն, որ պայմանագրերի մասնակի միակողմանի լուծվում է նշված չափաբաժինների համար ապրանքը չմատակարարելու պատճառով:

«Գավառի ԲԿ» ՓԲԸ-ն հրաժարվում է շարունակել «Միդա թրեյդ» ՍՊԸ-ի հետ համագործակցությունը: Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն 20-րդ և 49-րդ չափաբաժինների համար լուծարել է, միաժամանակ կիրառել է ՀՀ Կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գավառի ԲԿ» ՓԲԸ-ն առաջնորդվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետով, խնդրում է Ձեզ նախաձեռնել ընթացակարգ «Միդա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունը չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, ինչպես նաև պարտադրել «Միդա թրեյդ» ՍՊԸ-ին վճարել օրենքով սահմանված տույժը և տուգանքները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14623-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2020/227 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրերով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ aպրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ:

iv. Նույն հավելված 1-ով սահմանվել է նաև, որ մատակարարման ենթակա ապրանքի քանակը պետք է մատակարարվի ըստ պատվիրատուի պահանջի:

v. Պատվիրատուի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 11.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 16 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Համաձայնագրով հաստատվել է ֆինանսական միջոցները՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

vii. Պատվիրատուն էլ փոստի միջոցով 10.09.2020թ.-ին Մասնակցի ներկայացրել է ապրանքների մատակարարման պահանջ:

viii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 24.09.2020թ.-ին հրապարակված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին 07-309 ծանուցման համաձայն՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2020թ.-ին կնքված թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14623-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից,

պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2020թ.-ին կնքված թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանվել է, որ աշխատանքների կատարման ժամկետի սկիզբ է համարվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում տվյալ աշխատանքների մասով

կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ: Նույն հավելված 1-ով սահմանվել է նաև, որ մատակարարման ենթակա ապրանքի քանակը պետք է մատակարարվի ըստ պատվիրատուի պահանջի:

Պատվիրատուի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 11.03.2020թ.-ին կնքված թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 16 Համաձայնագրով հաստատվել է ֆինանսական միջոցները՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

Պատվիրատուն էլ փոստի միջոցով 10.09.2020թ.-ին Մասնակցի ներկայացրել է ապրանքների մատակարարման պահանջ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 24.09.2020թ.-ին հրապարակված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին 07-309 ծանուցման համաձայն՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2020թ.-ին կնքված թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 23.09.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

Վերոգրյալ իրավանորմերի՝ գործով հաստատված փաստերի հետ միասին գնահատման և համալիր վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում, «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.02.2020թ.-ին կնքված թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/5-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները, պատվիրատուի ներկայացրած պահանջը ստանալու պահից հաշված 5 օրացուցային ժամկետում, Մասնակցի կողմից չեն մատակարարվել, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 23.09.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 24.09.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14623-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/227 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ